

ԼԻԼԻԹ ԱՎԴԱԼՅԱՆ

ԲԱՆԱԿՈՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ  
ԱՌԱՆՁՆԱՅԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ  
ԸՆԹԱՑՔՈՒՄ ՃԱԳՈՂ ՀՆԱՐԱԿՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Թարգմանությունը ավելին քան գիտություն է: Այն  
նաև հմտություն է: Իսկ միանգամայն որակյալ  
թարգմանությունը նաև արվեստ է:

(E. Nida)

Հայ եկեղեցական տոների շարքում իր ուրույն տեղն է զբաղեցնում Թարգմանաց տոնը, որը նվիրված է հայ գրերի գյուտին, Թարգմանաց շարժմանն ու մշակույթի նշանավոր գործիչներին: Այս փաստը ևս վկան է այն պարզ ճշմարտության, որ թարգմանչի մասնագիտությունը եղել և մնում է հնագույն և կարևորագույն մասնագիտություններից մեկը:

Թարգմանությանը, լինի այն գրավոր, թե բանավոր, ունի մեկ ընդհանուր սահմանում, որը տվել է Լ. Ս. Բարխուդարովը. «Թարգմանությունը մեկ լեզվով լեզվական ստեղծագործության վերափոխումն է մեկ այլ լեզվով լեզվական ստեղծագործության՝ չխախտելով բովանդակային պլանը՝ այսինքն պահպանելով իմաստը»:

Իրականում թե՛ գրավոր, թե՛ բանավոր թարգմանիչները ելակետային լեզվով տրված տեքստը կամ հաղորդումը փոխակերպելով՝ տալիս են դրա համարժեքը թարգմանող լեզվում: Այս տեսանկյունից գրավոր և բանավոր թարգմանիչները միևնույն նպատակն են հետապնդում: Սակայն միանգամայն տարբեր են նրանց դերն ու գործունեության պայմանները:

Գրավոր թարգմանության ընթացքում թարգմանիչը կարող է խորհրդակցել իր գործընկերների հետ, օգտվել բառարաններից կամ այլ լեզվաբանական ձեռնարկներից: Նա կարող է արտագրել և խմբագրել տեքստը, ավելացնել կամ կրճատել որևէ բառ կամ նախադասություն, ընդմիջել աշխատանքը՝ բնագրի իմաստը ճշգրիտ հաղորդելու նպատակով ամենա-հարմար տարբերակը գտնելու համար, կամ էլ պարզապես հանգստանալ: Այլ է բանավոր թարգմանչի աշխատանքը: Նա գործ ունի ոչ թե գրավոր տեքստի, այլ խոսքի և զրույցի հետ: Որպես կանոն, բանավոր թարգմանիչը ժամանակի սղության պատճառով չի կարող օգտվել ո՛չ բառարաններից ու ձեռնարկներից,

ո՛չ էլ խորհրդակցել գործընկերների հետ. մա պետք է անմիջապես արձագանքի տվյալ պահին իր լսած հաղորդմանը:

Ստորև բերված են կանադացի բանավոր թարգմանիչներից մեկի՝ Բրայան Հարիսի դիտարկած տարբերությունները, որոնք առկա են գրավոր և բանավոր թարգմանիչների գործունեության ընթացքում.

գրավոր թարգմանչի  
բնույթը

բանավոր թարգմանչի աշխատանքի  
բնույթը

1. Գրավոր թարգմանության համար նախատեսված տեքստը գրված է անցյալում, այսինքն՝ թարգմանությունը սկսելուց առաջ:
2. Տեքստը ավարտված է և փոփոխությունների ենթակա չէ:
3. Կարելի է կարդալ տեքստը, փոքր-ինչ դադար տալ, այնուհետև կրկին վերադառնալ դրան:
4. Տեքստը կազմված է բացառապես բառերից (այսինքն գուրկ է ժեստերից և միմկաներից):
5. Տեքստերի մեծ մասը պատկանում են միևնույն հեղինակի գրչին: Թարգմանիչը չգիտի, թե ինչպիսի պայմաններում է այն գրվել:
6. Քանի որ տեքստը գրված է անցյալում, այն անմիջականորեն ուժեղ զգացմունքային ազդեցություն չի գործում թարգմանչի վրա:
7. Նախքան հրատարակումը թարգմանիչը կարող է վերաձևակել և ամբողջովին վերախմբագրել տեքստը:
8. Ինչպես հեղինակը, այնպես էլ թարգմանիչը չգիտեն, թե ով է ընթերցողը: Հետևաբար հեղինակի և ընթերցողի միջև անմիջական կապ գոյություն չունի:

1. Ելույթը իրականացվում է տեղում, տվյալ պահին՝ ներկայում:
2. Արտահայտվող միտքն անավարտ է, այն շարունակվում է, և դրա ավարտն անկանխատեսելի է:
3. Բանավոր հաղորդումն ակնթարթորեն «անհետանում է», և թարգմանչին մնում է վստահել միայն հիշողությամբ:
4. Բանավոր խոսքն ուղղորդվում է ժեստերով, թարգմանչին ականատեսն է այն պայմանների, որում իրականացվում է հաղորդումը և հռետորի ելույթը:
5. Բանավոր թարգմանիչը հարկադրված է թարգմանել մի քանի հռետորների խոսքը, որոնք գործածում են միանգամայն տարբեր ոճեր:
6. Բանավոր թարգմանիչը ոչ միայն գիտի միտքի պայմանների մասին, այլև այդ լարված մթնոլորտը սպառնում է իրեն:
7. Բանավոր թարգմանիչը պետք է առաջին իսկ պահից կարողանա միշտ թարգմանել, քանի որ երկրորդ հնարավորությունը նրան չի տրվում:
8. Բանավոր թարգմանիչը ծանոթ է իր լսարանին և տեսնում է նրանց:

Այնուամենայնիվ, գրավոր և բանավոր թարգմանությունների միջև կարևորագույն տարբերությունը նրանում է, որ բանավոր թարգմանությունը առավել ազատ է, պայմանով, որ թարգմանությունը հնարավորինս մոտ լինի բնագրին: «Գրավոր թարգմանության ժամանակ հարազատ մնալ բնագրին նշանակում է տալ հեղինակային գրավոր տեքստի կոնկրետ համարժեքը, իսկ

բանավոր թարգմանության դեպքում՝ հռետորի արտահայտած մտքի ճիշտ հաղորդում»:

Իրականում թարգմանությունը բարդ գործընթաց է, որտեղ լեզվին տիրապետելուց բացի անհրաժեշտ է հաշվի առնել մի շարք այլ գործոններ՝ թարգմանության ժանրը, խոսողի անձը, թարգմանչի որակավորումը, թարգմանությանը հատկացված ժամանակը, պայմանները, դաշիժնում տիրող մթնոլորտը և այլն: Բանավոր թարգմանության ժամանակ չափազանց կարևոր դեր է խաղում նաև հնչերանգը, քանի որ վերջինս հնարավորություն է տալիս հասկանալ, թե ասվածի մեջ եականը գլխավոր, թե երկրորդական նախադասության մեջ է արտահայտված: Խոսքի տեմպից և ծայնի բարձրությունից է կախված, թե ինչ ծավալի լրացուցիչ տեղեկատվություն է հնարավոր ստանալ:

Թարգմանության ժամանակ հռետորի խոսքը հնարավորինս մտապահել չկարողանալու դեպքում թարգմանչին օգնության են գալիս այն գրառումները, որոնք վերջինս կատարում է լսելու ընթացքում: Թարգմանիչը պետք է կարողանա մի ժամանակ և՛ գրառումներ կատարել, և՛ հետևել խոսողին (սա վերաբերվում է մասնավորապես հաջորդական թարգմանությանը):

Թարգմանության հաջողությունը մեծապես կախված է, թե ինչպիսի համակարգ է կիրառում թարգմանիչը բառերը գրառելիս և թե որքանով է նա տիրապետում վերջինիս:

Թարգմանության ժամանակ լուրջ խնդիրներ կարող են ծագել՝ կապված տարբեր լեզուների տարբեր շարահյուսական համակարգերի հետ:

Ի տարբերություն գրավոր թարգմանությամբ զբաղվող թարգմանիչների, որոնք չունեն ժամանակի սահմանափակում և կարող են առանց շտապելու դասավորել նախադասության անդամներն ըստ կարգի, բանավոր թարգմանիչը հարկադրված է սկսել իր խոսքը՝ պատկերացում չունենալով, թե ինչպիսի շարահյուսական զարգացում կունենա հռետորի խոսքը, և հետևաբար պետք է հնարավորինս զգուշավորություն ցուցաբերի, նախքան հախուռն կերպով առաջ անցնելը: Հարկավոր է փորձել, որքան հնարավոր է շրջահայաց լինել և կռահել նախադասության հետագա ընթացքը: Շատ հաճախ բնագրի և թարգմանության լեզուների միջև առկա շարահյուսական հսկայական տարբերությունները կարող են պատճառ հանդիսանալ այն տարօրինակ ճշմարտության, որ խոսքի արագ տեմպի դեպքում թարգմանչի տեսադաշտում հայտնվում են ավելի կոնկրետ, ավելի ամբողջական կառուցվածքներ, և հետևաբար թարգմանությունը շատ ավելի ճշգրիտ է ստացվում, քան խոսքի դանդաղ տեմպի դեպքում:

Բանավոր թարգմանության ժամանակ, ի տարբերություն գրավորի, թարգմանիչը հիմնականում ոչ թե դիմում է բառափոխումների, այլ վերադասա-

վորում է նախադասության կազմը, հակառակ դեպքում անգլերեն խոսքը չի համապատասխանի ընդունված չափանիշներին: Ինչպես նշում է շարահյուսության ուս մասնագետ Լ. Ա. Չերնյախովսկայան, երբ թարգմանիչը ուշադրություն է դարձնում միայն բառային և քերականական համապատասխանություններին, այդ դեպքում, ի վնաս շարահյուսական դժվարությունների՝ ծնվում է թարգմանչական լեզու, որտեղ, թվում է՝ բոլոր բառերը ճիշտ տեղում են, և նախադասության քերականական կառուցվածքում չկա ոչ մի սխալ, սակայն, այդուհանդերձ ինչ-որ բան այնպես չէ:

Այստեղից կարելի է ենթադրել, որ մայրենի լեզվի շարահյուսական համակարգը մեծապես կարող է ազդել թարգմանության որակի վրա:

Երկու լեզուների միջև առկա կառուցվածքային և շարահյուսական տարբերությունների իմացությունը կարող է օգնել թարգմանչին մնալ խոչընդոտները հաղթահարելու գործում:

Տեսականորեն ուսերեն կամ հայերեն մեկ նախադասությունը կարող է ունենալ անգլերեն թարգմանության հիմնից վեց շարահյուսական տարբերակ, սակայն ժամանակի սղության պատճառով թարգմանչին հաջողվում է դիտարկել դրանցից երկուսը կամ, լավագույն դեպքում՝ երեքը: Թարգմանիչը, երկար մտածելով հնարավոր տարբերակների շուրջ, կարող է բաց թողնել հոետորի խոսքի հաջորդ հատվածը, հետևաբար նա պետք է ուշադրությամբ հետևի բնագրի լեզվի նախադասությունների շարահյուսությանը:

Օրինակ, փոխելով հայերենում “չ”, իսկ ուսերենում “վալ” ժխտական մասնիկի տեղը, հիմնովին փոխվում է նախադասության իմաստը.

|                     |                  |                               |
|---------------------|------------------|-------------------------------|
| Он не может прийти. | Նա չի կարող գալ: | He can't/ isn't able to come. |
| Он может не прийти. | Նա կարող է չգալ: | He may not come.              |

Ինչ վերաբերվում է բնագրի լեզվի նախադասությունների շարահյուսությանը, ապա թարգմանիչը մտքի մեծ ճկունություն պետք է ցուցաբերի՝ պատրաստ լինելով գոյականը փոխարինել բայով և հակառակը, ներգոյական սեռի բայը դարձնել կրավորական և հակառակը, խոսքի մեջ ներմուծել անդեն կառուցվածքներ, բաց թողնել որոշ բառեր, փոխել նախադասության բաղադրիչ մասերի տեղերը՝ միժամանակ շարունակելով լսել հոետորին և թարգմանել:

Այս բոլոր գործողությունների միաժամանակ կատարումը պահանջում է կարճատև հիշողության մեծ լարվածություն: Սա այնպիսի լուրջ ծանրաբեռնվածություն է առաջացնում, որ այս բնագավառի ուս անվանի գիտնական Գ. Վ. Չեռնովին բառերի շարահյուսության և նախադասության վերածնակվորման խնդիրը գործնականում նույնիսկ անիրագործելի է թվում:

Ըստ Գ. Վ.Չեռնովի այս դեպքում առաջ է գալիս թարգմանչի օպերատիվ հիշողության ծավալի ընդլայնման և գերծանրաբեռնվածության վտանգ:

Լեզվաբանական գրականության մեջ թարգմանության հետ կապված խնդիրները լայնորեն լուսաբանված չեն: Ուստի հոդվածի նպատակն էր ներկայացնել բանավոր թարգմանության առանձնահատկություններից, ինչու չէ նաև թարգմանության ընթացքում ծագող դժվարություններից մի քանիսը:

#### Օգտագործված գրականության ցանկ

1. Миньяр-Белоручев Р. К.- "Последовательный Перевод", Москва, 1969
2. Линн Виссон- "Синхронный Перевод С Русского На Английский", Москва "Р. Валент", 1999
3. Կարապետյան Ն. Ա.- «Չաջորդական թարգմանության առանձնահատկությունը՝ որպես գրառումների վրա հիմնված թարգմանության տարատեսակ», ռոմանագերմանական լեզվաբանություն, ՊՈՍԿ Բ. «Լինգվա», 2006